МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

ք. Երևան **06.12.2024թ.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/111»

(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողմասնակիցների ցուցակում ներառելու մասին)

ՊԱՐԶԵՑ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից 2024 թվականի մայիսի 17-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապակարակվել է լաբորատոր գույքի ձեռքբերման «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/111» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «ՈՐՈՏ» ՍՊ ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 08263401, այսուհետ՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 30-ի 3-րդ նիստի արձանագրության 7-րդ կետով Ընկերությունն Ընթացակարգի հրավերի 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից, իսկ 2024 թվականի հունիսի 20-ին ԵՊՀ և Ընկերության միջև կնքվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/111-2» ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Կնքված Պայմանագրի մատակարարման ժամանակացույցի համաձայն Ընկերությունը պարտավորվել է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված առավելագույնը 30 օրացուցային օրվա ընթացքում (մինչև 2024 թվականի հուլիսի 20-ը) մատակարարում իրականացնել, սակայն Պայմանագրով նախատեսված գնման առարկաներից 5-րդ չափաբաժնի մատակարարումը մինչ օրս չի իրականացվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն «գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել

պայմանագիրը», իսկ 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն «վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի»:

Վերոնշյալ հանգամանքների լույսի ներքո՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.1 կետի և «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջները, ԵՊՀ-ն որոշել է պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով Պայմանագիրը 5-րդ չափաբաժնի մասով ամբողջությամբ միակողմանի լուծել:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը.

ՈՐՈՇԵՑ

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ սույն որոշումը կայացվելուն օրվան հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ
ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ **Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ**